ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

___Հայոց լեզվի և գրականության________
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __2__

«__12__» ___սեպտեմբեր___ 2023 թ.

ՀԼԳ/բ-082 «ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** ______առկա_______________________________________
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա__3-րդ, 1-ին կիսամյակ_____________

**Դասախոս(ներ)՝** ________Վալերի Փիլոյան_______________
/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ___pv60.60@mail.ru_________

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    14.2. Հարցաշար
    14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագիր

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հայ քննադատական մտքի պատմություն» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն է՝

Ուսանողներին ներկայացնել հայ գրական քննադատության զարգացումն ու օրինաչափությունները, հատկանշական կողմերն ու տարբերակիչ առանձնահատկությունները:

**2.2.** Դասընթացի խնդիրներն են՝

- Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր գիտելիքները՝ կապված քննական, գեղագիտական, գեղարվեստական մտքի զարգացման հետ:
- Ուսանողներին հնարավորություն տալ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել պրակտիկայում:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

«Հայ քննադատական մտքի պատմություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների ընդհանուր գիտելիքների առկայությունը հայ գրականության պատմությունից և գրականության տեսությունից, տեսական գիտելիքները գործնական վերլուծության մեջ կիրառելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու հմտությունների առկայությունը:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.**

«Հայ քննադատական մտքի պատմություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

-կարողանան ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,

-տիրապետեն հաղորդակցության ուսումնասիրման մեթոդներին,

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

-տիրապետեն գոնե իմացական նախնական մակարդակում գրականագիտական դպրոցների, առանձին ստեղծագործական ուղղությունների մասին գիտելիքների,

-կարողանան գրական երկը վերլուծել ըստ ձևային-կառուցվածքային, բովանդակային, սոցիոլոգիական, համադրական, կենսագրական, հոգեբանական, իմաստասիրական, այլևայլ մեթոդների,

-գրականագիտական, մասնավորապես՝ քննադատական բնույթի ուսումնասիրություններում, հրապարակումներում, ընդհանրապես, գիտական բնույթի երկերում գտնել ռացիոնալը, տարանջատել կարևորն ու անկարևորը, որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

**<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**
**<u>ԳԿ1</u>** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
**<u>ԳԿ4</u>** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
**<u>ԳԿ9</u>** խնդիրների լուծում,
**<u>ԳԿ10</u>** որոշումների ընդունում:
**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**
**<u>ՀԳԿ1</u>** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
**<u>ՀԳԿ2</u>** հետազոտություններ կատարելու ունակություններ,
**<u>ՀԳԿ3</u>** սովորելու ունակություն,
**<u>ՀԳԿ8</u>** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>**
**<u>ԱԿ2</u>** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
**<u>ԱԿ4</u>** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
**<u>ԱԿ6</u>** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
**<u>ԱԿ11</u>** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
**<u>ԱԿ14</u>** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

## *5.* Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Հայ քննադատական մտքի պատմություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

---

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել:

## *6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 2 կրեդիտ/60 ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Դասախոսություն | 16 |
| Գործնական աշխատանք | 14 |
| Ինքնուրույն աշխատանք | 30 |
| **Ընդամենը** | 60 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .
   - **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
   - **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, թեմատիկ սեմինար, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն :

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | Ներածություն: Հայ գրական քննադատության զարգացման փուլերը: Քննադատությունը 5-րդ դարի մատենագրության մեջ | 2 | | 2 | | 4 |
| 2. | Քննական հայացքները Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Փարպեցու մատյաններում: Հովհ. Մանդակունու քննական հայացքները: Քննական հայացքներ թարգմանական գրականության մեջ... Դիոնիսիոս Թրակացու քրեականության մեկնությունները | | | | | |
| 3. | Գրական քննադատությունը 10-14-րդ դարերում: Գր. Նարեկացի: Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Ներսես Շնորհալի... Հովհաննես Պլուզ Երզնկացի... | 2 | | 2 | | 4 |
| 4. | Գրական քննադատությունը 18-րդ դարում: Մխիթարյաններ: 19-րդ դարի լուսավորական քննադատությունը: Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան: Ժողովրդական և գուսանական արվեստի գնահատության խնդիրը: Թատերական քննադատությունը | 2 | | 2 | | 4 |
| 5. | Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Ստ. Պալասանյան, Րաֆֆի, Հակոբ Պարոնյան... | 2 | | 2 | | 4 |
| 6. | Գրական քննադատությունը 19-րդ դարավերջին. Ղ. Աղայան, Լ. Մանվելյան... | 2 | | | | 4 |
| 7. | Վրթ. Փափազյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Թումանյան: «Իրապաշտ» կամ «բնապաշտ» դպրոցի քննադատությունն ու փորձը: Արփ. Արփիարյան, Գր. Զոհրապ | 2 | | 2 | | 4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Հայ քննադատությունը 20-րդ դարասկզբին: Արտաշես Հարությունյան: Գրական դպրոցները հայ իրականության մեջ: Նիկոլ Աղբալյան, Ս. Հակոբյան, Արսեն Տերտերյան: Թ. Ավդալբեկյան, Հ. Սուրխաթյան, Ղ. Խանզադյան, Պ. Մակինցյան: Մարքսիստական քննադատությունը:<br>Գրական քննադատությունը խորհրդահայ տարիներին | 4 | | 4 | | 6 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 16 | | 14 | | 30 |

**11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Հրանտ Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Ա, Բ, Գ | 1983, 1985, 1992 |
| 2. | Հեղինակային կոլեկտիվ (խմբ.՝ Ս. Սարինյան), Հայ քննադատության պատմություն, 2 հատորով | 1985 |
| 3. | Ջրբաշյան Էդ., Գեղագիտություն և գրականություն | 1983 |
| 4. | Լ. Ասմարյան, Արևմտահայ քննադատական միտքը 19-րդ դարի 60-70- ական թթ. | |
| 5. | Ժ. Քալանթարյան, Հայ գրականագիտության պատմություն | 1982 |
| 6. | Ժ. Քալանթարյան, Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր | 1981, 1984 |
| 7. | Հեղինակային կոլեկտիվ (կազմեց և ծանոթագրեց՝ Ժ. Քալանթարյան), Հայ գրական քննադատության քրեստոմատիա, հատոր 1,2 | |
| 8. | Լարիսա Մնացականյան, Գրական քննադատությունը 20-րդ դարասկզբին | |
| 9. | Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը («Քննադատության առարկան և մեթոդը» բաժինը) | 1979 |
| 10. | Լ. Մնացականյան, Արևմտահայ քննադատության պատմություն | 1982 |

| | | |
|---|---|---|
| 11. | Լ. Ասմարյան, Գրական քննադատությունը 70-80-ական թ.թ | 1980 |
| 12. | Ս. Սարինյան, Սերունդներ և ավանդներ | 1984 |
| 13. | Մ. Նալբանդյան, Գրականության մասին | 1964 |
| 14. | Գր. Զոհրապ, Գրականության մասին | 1973 |
| 15. | Արտ. Հարությունյան, Գիշերվան ճամփորդը/ «Հոդվածներ»/ | 1968 |
| 16. | Վրթանես Փափազյան, Գրականության մասին | 1962 |
| 17. | Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3 | |
| **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | | |
| 1. | Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող<br>հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[6] |
|---|---|---|---|---|
| 1. | Ներածություն: Հայ գրական քննադատության զարգացման փուլերը: Քննադատությունը 5-րդ դարի մատենագրության մեջ | ▪ Քննադատությունն իբրև գրականագիտության հիմնական մասերից մեկը:<br>▪ Հայ գրական քննադատության սկզբնավորումը:<br>▪ Քննադատությունը մատենագրության մեջ: | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 2. | Քննական հայացքները Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Փարպեցու մատյաններում: Հովհ. Մանդակունու քննական հայացքները: Քննական հայացքներ թարգմանական գրականության մեջ... Դիոնիսիոս Թրակացու քրեականության մեկնությունները | ▪ Քննադատությունը Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու մոտ:<br>▪ Ստապատում ոճի մերժումը:<br>▪ Սեփական ստեղծագործական սկզբունքների շարադրումը: Հեթանոսական դպրության մերժումը:<br>▪ Խորենացին իբրև ազգային մշակույթի զարգացման գաղափարախոս:<br>▪ Հասարակական օգտակարության սկզբունքը Խորենացու երկում:<br>▪ Հունական և պարսից առասպելների գնահատությունը: Խորենացու վերաբերմունքը բանահյուսությանը:<br>▪ Գրական ժանրերի գնահատությունը «Հաղագս Պիտոյից» երկի մեկնություններում: Եվրիպիդեսի «Պելիադներ» ողբերգության քննությունը:<br>▪ Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը: Աշխարհիկ և հոգևոր սկզբունքների բախումը արվեստի գնահատության հարցում: | | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 3. | Գրական քննադատությունը 10- | ▪ Քննական միտքը 10-րդ դարում և վաղ վերածննդի | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

[6] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 14-րդ դարերում: Գր. Նարեկացի: Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Ներսես Շնորհալի... Հովհաննես Պլուզ Երզնկացի... | խնդիրը: Բանաստեղծության և պատմագրության ծաղկումը:<br>▪ Նարեկացին 10-րդ դարի բանաստեղծության նվաճումների և աշխարհիկ ոգու դրսևորումների բարձրակետ: Ձևի և բովանդակության ներդաշնության հարցը: Նարեկացին և հանգը: Արվեստագետի անհատականության և անմահության հարցերը Նարեկացու մատյանում:<br>▪ Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Բանաստեղծության արժևորումը: Ազգային գրականության գնահատությունը այլոց հետ զուգահեռմամբ:<br>▪ Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Տեղը հայ մշակույթի պատմության մեջ: Արվեստի ծագման Իմաստասերի տեսությունը: Իմաստասերը բնության և արվեստի փոխհարաբերության մասին:<br>▪ Ժամանակի պահանջների արտացոլումը Ներսես Շնորհալու ստեղծագործության մեջ: Ժանրերի հարստացումը: Բանաստեղծական չափերի, ոճերի, ժանրերի անհրաժեշտության հիմնավորումը: | | |
| 4. | Գրական քննադատությունը 18-րդ դարում: Մխիթարյաններ: 19-րդ դարի լուսավորական քննադատությունը: Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան: Ժողովրդական և գուսանական արվեստի գնահատության խնդիրը: Թատերական քննադատությունը | ▪ Խ. Աբովյան: Աշխարհայացքը: Գրականության և լեզվի հարցերում Աբովյանի առաջադրած սկզբունքները:<br>▪ Ստեփանոս Նազարյան: Լեզվի նշանակության ըմբռնումը: Նազարյանի դերը աշխարհաբարի զարգացման գործում: Գրականության հին բովանդակության քննադատությունը: Նազարյանը գրականությյան և թատոնի հասարակական դերի մասին:<br>▪ Նալբանդյանի տեղը հայ հասարակական մտքի պատմության մեջ: Աշխարհաբարի նշանակության հիմնավորումը: Մատենագրության և հայ հին գրականության գնահատությունը: Աբովյանի «Վերքի» գնահատությունը: | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 5. | Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական | ▪ Պրոֆեսիոնալ քննադատության զարգացումը 19-րդ դարի 70-80-ական թ.թ.: Գեղագիտական իդեալի | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թվականներին: Ստ. Պալասանյան, Րաֆֆի, Հակոբ Պարոնյան… | հասարակական նշանակության արծարծումը:<br>▪ Պալասանյանի վերաբերմունքը ժամանակակից գրողների նկատմամբ: Ծերենցի և պատմավիպասանության գնահատությունը:<br>▪ Րաֆֆու աշխարհայացքը և հանգելը ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությանը: Րաֆֆու ըմբռնումները քննադատության և քննադատի մասին: Քննադատի անաչառության հարցը: Գրական երկի միտումի և գեղարվեստականության փոխհարաբերության խնդիրը Րաֆֆու հայացքներում: Պատմավեպի րաֆֆիական տեսությունը:<br>▪ Հակոբ Պարոնյանի քննադատական հայացքները: Պայքարը հանուն ռեալիզմի: Ազգային գրականություն ստեղծելու պահանջը: | | |
| 6. | Գրական քննադատությունը 19-րդ դարավերջին. Ղ. Աղայան, Լ. Մանվելյան… | ▪ Ղազարոս Աղայանը գրողի և ժողովրդի կապի մասին: Բնաշխարհիկ գրողի և գրականության բնորոշումը: Բանաստեղծի կոչման ըմբռնումը: Պատկանյանի, Շահազիզի, Հովհաննիսյանի, Թումանյանի պոեզիայի գնահատությունը: Ռեալիզմի սկզբունքների պաշտպանությունը Րաֆֆու «Կայծերի» կապակցությամբ:<br>▪ Լևոն Մանվելյանի գրաքննադատական հայացքները: Գրականության և կյանքի, ազգայինի և համամարդկայինի փոխհարաբերության, գրականությունների փոխազդեցության հարցերը: | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 7. | Վրթ. Փափազյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Թումանյան: «Իրապաշտ» կամ «բնապաշտ» դպրոցի քննադատությունն ու փորձը: Գր. Զոհրապ | ▪ Վրթանես Փափազյանի քննադատական գործունեությունը 80-90-ական թվականներին:<br>▪ Ալեքսանդր Շիրվանզադեն կյանքի և գրականության փոխհարաբերության մասին: Գեղարվեստական մեթոդների և ուղղությունների պատմական հաջորդափոխության գիտական բացատրությունը: Շիրվանզադեի պայքարը «կեղծ ռեալիզմի» դեմ: Շիրվանզադեի հայացքները վեպի մասին:<br>▪ Թումանյանը բանահյուսության և գրականության կապի մասին: Ժողովրդական նյութի մշակման թումանյանական սկզբունքը: Էպոսի և հեքիաթի թումանյանական գնահատությունը: Հայ նոր գրականության Թումանյանի | 2 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | շրջաբաժանումը:<br>▪ Թումանյանը միջնադարյան պոեզիայի մասին:<br>▪ Թումանյանը գեղարվեստական թարգմանության մասին:<br>▪ «Իրապաշտ» կամ «բնապաշտ» դպրոցի քննադատությունն ու փորձը:<br>▪ Գրիգոր Զոհրապը ռեալիզմի և ժողովրդայնության մասին: Արվեստի և իրականության հարաբերության զոհրապյան ըմբռնումը:<br>▪ Թատրոնի և դրամատուրգիայի խնդիրները Զոհրապի քննադատական գործունեության մեջ: | | |
| 8. | Հայ քննադատությունը 20-րդ դարասկզբին: Արտաշես Հարությունյան: Գրական դպրոցները հայ իրականության մեջ: Նիկոլ Աղբալյան, Ս. Հակոբյան, Արսեն Տերտերյան: Թ. Ավդալբեկյան, Հ. Սուրխաթյան, Ղ. Խանզադյան, Պ. Մակինցյան: Մարքսիստական քննադատությունը:<br>Գրական քննադատությունը խորհրդահայ տարիներին: | ▪ Արևմտահայ 80-ականների ռեալիստական ավանդների և 20-րդ դարասկզբի գեղագիտական նոր ըմբռնումների խաչաձևումը Արտ. Հարությունյանի քննադատական հայացքներում:<br>▪ Արևմտահայ գրականության զարգացման հեռանկարները 90-ականների վերջին: Գրականությանը կյանքին մերձեցնելու պահանջը: Ռեալիզմի և գեղարվեստականության խնդիրները Արտ. Հարությունյանի դիմանկարներում: Դարասզբի պոեզիայի նորագույն երևույթների գնահատությունը Հարությունյանի կողմից:<br>▪ Դարասկզբի նորագույն գրական հոսանքները Հարությունյանի գնահատմամբ: Տեսակետ հայ պոեզիայում սիմվոլիզմի դրսևորումների մասին:<br>▪ Արսեն Տերտերյանը ժամանակի հայ գրականության ու գրողների գնահատող: Մուրացանի, Նար-Դոսի, Շիրվանզադեի, Թումանյանի, Տերյանի, Նալբանդյանի, Հովհաննիսյանի, Շանթի ստեղծագործությունների գրապատմական ու գեղարվեստական արժեքների վերհանումը:<br>▪ Ա. Տերտերյանի վաստակը հայ գեղագիտական մտքի պատմության ստեղծման ասպարեզում:<br>▪ Գրական առնչությունների ու կապերի հարցերը Տերտերյանի քննադատական ժառանգության մեջ:<br>▪ Մարքսիստական գրաքննադատությունը: | 4 | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

### 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[7] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ներածություն: Հայ գրական քննադատության զարգացման փուլերը: Քննադատությունը 5-րդ դարի մատենագրության մեջ | Քննադատությունն իբրև գրականագիտության հիմնական մասերից մեկը: Հայ գրական քննադատության սկզբնավորումը: Քննադատությունը մատենագրության մեջ: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 2. | Քննական հայացքները Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Փարպեցու մատյաններում: Հովի. Մանդակունու քննական հայացքները: Քննական հայացքներ թարգմանական գրականության մեջ... Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնությունները | Քննադատությունը Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու մոտ: Ստապատում ոճի մերժումը: Սեփական ստեղծագործական սկզբունքների շարադրումը: Հեթանոսական դպրության մերժումը: Խորենացին իբրև ազգային մշակույթի զարգացման գաղափարախոս: Հասարակական օգտակարության սկզբունքը Խորենացու երկում: Հունական և պարսից առասպելների գնահատությունը: Խորենացու վերաբերմունքը բանահյուսությանը: Գրական ժանրերի գնահատությունը «Հաղագս Պիտոյից» երկի մեկնություններում: Եվրիպիդեսի | | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Պելիադներ» ողբերգության քննությունը: Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը: Աշխարհիկ և հոգևոր սկզբունքների բախումը արվեստի գնահատության հարցում: | | | |
| 3. | Գրական քննադատությունը 10-14-րդ դարերում: Գր. Նարեկացի: Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Ներսես Շնորհալի... Հովհաննես Պլուզ Երզնկացի... | Քննական միտքը 10-րդ դարում և վաղ վերածննդի խնդիրը: Բանաստեղծության և պատմագրության ծաղկումը:<br>Նարեկացին 10-րդ դարի բանաստեղծության նվաճումների և աշխարհիկ ոգու դրսևորումների բարձրակետ: Ձևի և բովանդակության ներդաշնության հարցը: Նարեկացին և հանգը: Արվեստագետի անհատականության և անմահության հարցերը Նարեկացու մատյանում: Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Բանաստեղծության արժևորումը: Ազգային գրականության գնահատությունը այլոց հետ զուգահեռմամբ:<br>Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Տեղը հայ մշակույթի պատմության մեջ: Արվեստի ծագման Իմաստասերի տեսությունը: Իմաստասերը բնության և արվեստի փոխհարաբերության մասին:<br>Ժամանակի պահանջների արտացոլումը Ներսես Շնորհալու ստեղծագործության մեջ: Ժանրերի հարստացումը: Բանաստեղծական չափերի, ոճերի, ժանրերի անհրաժեշտության հիմնավորումը: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 4. | Գրական քննադատությունը 18-րդ դարում: Մխիթարյաններ: | Խ. Աբովյան: Աշխարհայացքը: Գրականության և լեզվի հարցերում Աբովյանի առաջադրած | 2 | Բանավոր հարցում, | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 19-րդ դարի լուսավորական քննադատությունը: Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան: Ժողովրդական և գուսանական արվեստի գնահատության խնդիրը: Թատերական քննադատությունը | սկզբունքները: Ստեփանոս Նազարյան: Լեզվի նշանակության ըմբռնումը: Նազարյանի դերը աշխարհաբարի զարգացման գործում: Գրականության հին բովանդակության քննադատությունը: Նազարյանը գրականության և թատրոնի հասարակական դերի մասին: Նալբանդյանի տեղը հայ հասարակական մտքի պատմության մեջ: Աշխարհաբարի նշանակության հիմնավորումը: Մատենագրության և հայ հին գրականության գնահատությունը: Աբովյանի «Վերքի» գնահատությունը: | | խմբային քննարկում | |
| 5. | Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Ստ. Պալասանյան, Րաֆֆի, Հակոբ Պարոնյան... | Պրոֆեսիոնալ քննադատության զարգացումը 19-րդ դարի 70-80-ական թ.թ.: Գեղագիտական իդեալի հասարակական նշանակության արծարծումը: Պալասանյանի վերաբերմունքը ժամանակակից գրողների նկատմամբ: Ծերենցի և պատմավիպասանության գնահատությունը: Րաֆֆու աշխարհայացքը և հանգելը ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությանը: Րաֆֆու ըմբռնումները քննադատության և քննադատի մասին: Քննադատի անաչառության հարցը: Գրական երկի միտումի և գեղարվեստականության փոխհարաբերության խնդիրը Րաֆֆու հայացքներում: Պատմավեպի րաֆֆիական տեսությունը: Հակոբ Պարոնյանի քննադատական հայացքները: Պայքարը հանուն ռեալիզմի: Ազգային | 2 | Բանավոր հարցում, խմբային քննարկում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գրականություն ստեղծելու պահանջը: | | | |
| 6. | Գրական քննադատությունը 19-րդ դարավերջին. Ղ. Աղայան, Լ. Մանվելյան... | Ղազարոս Աղայանը գրողի և ժողովրդի կապի մասին: Բնաշխարհիկ գրողի և գրականության բնորոշումը: Բանաստեղծի կոչման ըմբռնումը: Պատկանյանի, Շահազիզի, Հովհաննիսյանի, Թումանյանի պոեզիայի գնահատությունը: Ռեալիզմի սկզբունքների պաշտպանությունը Րաֆֆու «Կայծերի» կապակցությամբ: Լևոն Մանվելյանի գրաքննադատական հայացքները: Գրականության և կյանքի, ազգայինի և համամարդկայինի փոխհարաբերության, գրականությունների փոխազդեցության հարցերը: | | Բանավոր հարցում, խմբային քննարկում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 7. | Վրթ. Փափազյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Թումանյան: «Իրապաշտ» կամ «բնապաշտ» դպրոցի քննադատությունն ու փորձը: Արփ. Արփիարյան, Գր. Զոհրապ | Վրթանես Փափազյանի քննադատական գործունեությունը 80-90-ական թվականներին: Ալեքսանդր Շիրվանզադեն կյանքի և գրականության փոխհարաբերության մասին: Գեղարվեստական մեթոդների և ուղղությունների պատմական հաջորդափոխության գիտական բացատրությունը: Շիրվանզադեի պայքարը «կեղծ ռեալիզմի» դեմ: Շիրվանզադեի հայացքները վեպի մասին: Թումանյանը բանահյուսության և գրականության կապի մասին: Ժողովրդական նյութի մշակման թումանյանական սկզբունքը: Էպոսի և հեքիաթի թումանյանական գնահատությունը: Հայ նոր գրականության Թումանյանի շրջաբաժանումը: Թումանյանը միջնադարյան պոեզիայի մասին: Թումանյանը գեղարվեստական թարգմանության մասին: Գրիգոր Զոհրապը ռեալիզմի և ժողովրդայնության մասին: Արվեստի և | 2 | Բանավոր հարցում, խմբային քննարկում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրականության հարաբերության զոհրապյան ըմբռնումը: Թատրոնի և դրամատուրգիայի խնդիրները Զոհրապի քննադատական գործունեության մեջ: | | | |
| 8. | Հայ քննադատությունը 20-րդ դարասկզբին: Արտաշես Հարությունյան: Գրական դպրոցները հայ իրականության մեջ: Նիկոլ Աղբալյան, Ս. Հակոբյան, Արսեն Տերտերյան: Թ. Ավդալբեկյան, Հ. Սուրխաթյան, Ղ. Խանզադյան, Պ. Մակինցյան: Մարքսիստական քննադատությունը: Գրական քննադատությունը խորհրդահայ տարիներին: | Արևմտահայ 80-ականների ռեալիստական ավանդների և 20-րդ դարասկզբի գեղագիտական նոր ընբռնումների խաչաձևումը Արտ. Հարությունյանի քննադատական հայացքներում: Արևմտահայ գրականության զարգացման հեռանկարները 90-ականների վերջին: Գրականությանը կյանքին մերձեցնելու պահանջը: Ռեալիզմի և գեղարվեստականության խնդիրները Արտ. Հարությունյանի դիմանկարներում: Դարասզբի պոեզիայի նորագույն երևույթների գնահատությունը Հարությունյանի կողմից: Դարասկզբի նորագույն գրական հոսանքները Հարությունյանի գնահատմամբ: Տեսակետ հայ պոեզիայում սիմվոլիզմի դրսևորումների մասին: Արսեն Տերտերյանը ժամանակի հայ գրականության ու գրողների գնահատող: Մուրացանի, Նար-Դոսի, Շիրվանզադեի, Թումանյանի, Տերյանի, Նալբանդյանի, Հովհաննիսյանի, Շանթի ստեղծագործությունների գրապատմական ու գեղարվեստական արժեքների վերհանումը: Ա. Տերտերյանի վաստակը հայ գեղագիտական մտքի պատմության ստեղծման ասպարեզում: Գրական առնչությունների ու կապերի հարցերը Տերտերյանի քննադատական ժառանգության մեջ: Մարքսիստական գրաքննադատությունը: | 4 | | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

## 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[8] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 2. | Գեորգ Ախվերդյան, «Սայաթ-Նովա» | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 3. | Րաֆֆու «Սամվել» վեպի «Հառաջաբան»-ը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 4. | Դ. Վարուժանի «Գրական դպրոցներ» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 5. | Րաֆֆու և Հայկունու բանավեճը «Կայծեր»-ի առիթով | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 6. | Մ. Մեծարենցի «Ինքնադատության փորձ մը «Ծիածանին» առիթով» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5, ՊԳ10 |

[8] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը:
[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Մ. Մեծարենցի «Նարեկացիին հետ» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5, ՊԳ10 |
| 8. | Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 9. | Եղիա Տեմիրճիպաշյանի «Անձնական և անանձն բանաստեղծություն» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5, ՊԳ10 |
| 10. | Ս. Աղաբաբյանի «Մի կյանքի պատմություն» հոդվածը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 11. | Լ. Հախվերդյանի «Ինչ-ն ու ինչպես-ը» հոդվածը, | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |
| 12. | Մ. Սանթոյանի «Քաջնազարության և միշտ նորացող Նազարի մասին» ուսումնասիրությունը | Ուսումնասիրության հիմնարար դրույթները | Ռեֆերատ | Կիսամյակի 7-րդ կամ 17-րդ շաբաթ | Բանավոր հարցում | ՊԳ1, ՊԳ2, ՊԳ5 |

## 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[10]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | - |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

[10] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[11]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[11] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

## 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Հայ գրական քննադատության սկզբնավորումը և պարբերացումը
2. Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ արծարծված քննադատական տեսակետները
3. Հեթանոսական բարքերի, հոգեբանության և արվեստի քննադատությունը Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ
4. Մ. Խորենացու գրական-քննադատական հայացքները
5. Քաղաքական և գրական հայացքների հակասությունները և գեղարվեստական ոճի խնդիրը 5-րդ դարի մատենագրության մեջ
6. Ղազար Փարպեցու գրական-քննադատական հայացքները
7. Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը. հեթանոսության և աշխարհիկ ոգու քննադատությունը
8. Քննադատությունը 10-րդ դարում և վաղ Վերածննդի խնդիրը
9. Գր. Նարեկացու «Մատյան»-ում դրսևորված քննական հայացքները
10. Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տեսական-քննական հայացքները
11. Գրականությունը և տեսական միտքը 11-12-րդ դ.դ.
12. Հովհաննես Սարկավագ Իմաստասերի քննական հայացքները
13. Քննական հայացքների արտահայտությունը Ներսես Շնորհալու մոտ
14. Մշակույթն ու քննադատական միտքը 13-14-րդ դ.դ.
15. Հովհաննես Երզնկացու քննական հայացքները
16. Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու երկերում արտահայտված քննադատական հայացքների համակարգը
17. Մշակույթի ու քննադատական մտքի անկումը 15-18-դ.դ.
18. Քննադատական միտքը 18-րդ դարում. Մխիթարյանների գործունեությունը. կլասիցիզմի տեսության «հայացումը»
19. Սարգիս Տիգրանյանի «Ինչ ինչ զեղերերգութենէ» հոդվածը որպես կլասիցիզմի առաջին համապարփակ արտահայտություն արևելահայերի մոտ
20. Լուսավորական քննադատության ձևավորումը. առաջին ներկայացուցիչները
21. Խ. Աբովյանի գրաքննադատական հայացքները
22. Հայ գրական-քննադատական միտքը 19-րդ դարի 50-60-ական թ.թ.
23. Նոր գրականության ձևավորման հիմնավորումը «Վերք»-ի «Հառաջաբան»-ում
24. Ժողովրդական ստեղծագործության և գուսանական երգերի գնահատությունը Գ. Ախվերդյանի, Ղ. Ալիշանի և Ռ.Պատկանյանի գործերում
25. Գրապայքարը և քննադատների ու քննադատության մասնակցությունը
26. Ազգային թատրոնի ու դրամատուրգիայի ձևավորումը: Բանավեճ թատրոնի շուրջ
27. Ստ. Նազարյանի գրաքննադատական հայացքները
28. Միքայել Նալբանդյան. լուսավորական քննադատությունից անցում հեղափոխական-դեմոկրատական գաղափարներին
29. Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական թ.թ.
30. Ստ. Պալասանյանի քննադատական հայացքները
31. Րաֆֆու հայացքները որպես ռոմանտիզմի տեսության բարձրակետ
32. «Սամվելի» «Հառաջաբանը». պատմավեպի տեսությունը

33. Ալ. Շիրվանզադեն ռեալիզմի տեսաբան
34. Հովհ. Թումանյանը տեսաբան. ազգայինի ու ժողովրդայնության խնդիրները
35. Հայ գրական քննադատությունը 19-րդ դարի վերջին
36. Հայ գրական քննադատությունը 20-րդ դարի սկզբին
37. Գր. Զոհրապի քննադատական հայացքները
38. Ղազարոս Աղայանի քննադատական հայացքները
39. Լ. Մանվելյանը քննադատ
40. Վրթ. Փափազյանի քննադատական հայացքները
41. Մ. Մեծարենցի քննադատությունն ու ինքնաքննադատությունը
42. Արտ. Հարությունյան քննադատը: «Վաղվան գրականության» շուրջ ծագած բանավեճը
43. Արշակ Չոպանյանը տեսաբան, քննադատ ու գրականության պատմաբան. դերը սփյուռքահայ գրականության ձևավորման ընթացքում
44. «Դիցաբանական» կամ «առասպելաբանական» դպրոցը. արտահայտությունը հայ քննադատության մեջ
45. Կուլտուր-պատմական դպրոցը և նրա արտահայտությունը հայ գրականագիտության և գրաքննադատության մեջ
46. Հոգեբանական դպրոցը և հայ գրաքննադատությունը
47. Արսեն Տերտերյան. գրականության քննադատն ու պատմաբանը
48. Դ. Վարուժանի քննադատական հայացքները
49. Մարքսիստական քննադատությունը 20-րդ դարի սկզբին

Ա (1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի 8-րդ շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված հարցեր.**
  - Հայ գրական քննադատության սկզբնավորումը և պարբերացումը
  - Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ արծարծված քննադատական տեսակետները
  - Հեթանոսական բարքերի, հոգեբանության և արվեստի քննադատությունը Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ
  - Մ. Խորենացու գրական-քննադատական հայացքները
  - Քաղաքական և գրական հայացքների հակասությունները և գեղարվեստական ոճի խնդիրը 5-րդ դարի մատենագրության մեջ
  - Ղազար Փարպեցու գրական-քննադատական հայացքները
  - Հովհան Մանդակունու «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը. հեթանոսության և աշխարհիկ ոգու քննադատությունը
  - Քննադատությունը 10-րդ դարում և վաղ Վերածննդի խնդիրը
  - Գր. Նարեկացու «Մատյան»-ում դրսևորված քննական հայացքները
  - Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տեսական-քննական հայացքները
  - Գրականությունը և տեսական միտքը 11-12-րդ դ.դ.
  - Հովհաննես Սարկավագ Իմաստասերի քննական հայացքները
  - Քննական հայացքների արտահայտությունը Ներսես Շնորհալու մոտ
  - Մշակույթն ու քննադատական միտքը 13-14-րդ դ.դ.
  - Հովհաննես Երզնկացու քննական հայացքները

- Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու երկերում արտահայտված քննադատական հայացքների համակարգը
- Մշակույթի ու քննադատական մտքի անկումը 15-18-դ.դ.
- Քննադատական միտքը 18-րդ դարում. Մխիթարյանների գործունեություն. կլասիցիզմի տեսության «հայացումը»
- Սարգիս Տիգրանյանի «Ինչ ինչ զեղերերգութենէ» հոդվածը որպես կլասիցիզմի առաջին համապարփակ արտահայտություն արևելահայերի մոտ
- Լուսավորական քննադատության ձևավորումը. առաջին ներկայացուցիչները
- Խ. Աբովյանի գրաքննադատական հայացքները
- Հայ գրական-քննադատական միտքը 19-րդ դարի 50-60-ական թ.թ.
- Նոր գրականության ձևավորման հիմնավորումը «Վերք»-ի «Հառաջաբան»-ում
- Ժողովրդական ստեղծագործության և գուսանական երգերի գնահատությունը Գ. Ախվերդյանի, Ղ. Ալիշանի և Ռ.Պատկանյանի գործերում
- Գրապայքարը և քննադատների ու քննադատության մասնակցությունը

Բ) (2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի 18-րդ շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված հարցեր.**

- Ազգային թատրոնի ու դրամատուրգիայի ձևավորումը: Բանավեճ թատրոնի շուրջ
- Ստ. Նազարյանի գրաքննադատական հայացքները
- Միքայել Նալբանդյան. լուսավորական քննադատությունից անցում հեղափոխական-դեմոկրատական գաղափարներին
- Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական թ.թ.
- Ստ. Պալասանյանի քննադատական հայացքները
- Րաֆֆու հայացքները որպես ռոմանտիզմի տեսության բարձրակետ
- «Սամվելի» «Հառաջաբանը». պատմավեպի տեսությունը
- Ալ. Շիրվանզադեն ռեալիզմի տեսաբան
- Հովհ. Թումանյանը տեսաբան. ազգայինի ու ժողովրդայնության խնդիրները
- Հայ գրական քննադատությունը 19-րդ դարի վերջին
- Հայ գրական քննադատությունը 20-րդ դարի սկզբին
- Գր. Զոհրապի քննադատական հայացքները
- Ղազարոս Աղայանի քննադատական հայացքները
- Լ. Մանվելյանը քննադատ
- Վրթ. Փափազյանի քննադատական հայացքները
- Մ. Մեծարենցի քննադատությունն ու ինքնաքննադատությունը
- Արտ. Հարությունյան քննադատը: «Վաղվան գրականության» շուրջ ծագած բանավեճը
- Արշակ Չոպանյանը տեսաբան, քննադատ ու գրականության պատմաբան. դերը սփյուռքահայ գրականության ձևավորման ընթացքում
- «Դիցաբանական» կամ «առասպելաբանական» դպրոցը. արտահայտությունը հայ քննադատության մեջ
- Կուլտուր-պատմական դպրոցը և նրա արտահայտությունը հայ գրականագիտության և գրաքննադատության մեջ
- Հոգեբանական դպրոցը և հայ գրաքննադատությունը
- Արսեն Տերտերյան. գրականության քննադատն ու պատմաբանը

- Դ. Վարուժանի քննադատական հայացքները
- Մարքսիստական քննադատությունը 20-րդ դարի սկզբին

**14.4. Գնահատման չափանիշները.**

- Ընթացիկ ստուգում՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- Ստուգարք՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը գումարային 20 միավոր։

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դասընթացի թվանիշը, անվանումը** | **ՀԼԳ/բ-082 ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** | | | |
| **Դասընթացին հատկացվող կրեդիտը** | 2 | | | |
| **Ուսումնառության տարի / կիսամյակ** | 3-րդ տարի,1-ին կիսամյակ | | | |
| **Ժամերի բաշխումը** | Լսարանային | 28 | Դասախոսություն | 16 |
| | | | Գործնական աշխատանք | 14 |
| | Ինքնուրույն | 30 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| **Ստուգման ձևը** | ստուգարք | | | |
| **Դասընթացի նպատակը** | Ուսանողներին ներկայացնել հայ գրական քննադատության զարգացումն ու օրինաչափությունները, հատկանշական կողմերն ու տարբերակիչ առանձնահատկությունները: | | | |
| **Դասընթացի վերջնարդյունքները** | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>- կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում,<br>-տիրապետեն հաղորդակցության ուսումնասիրման մեթոդներին,<br>-տիրապետեն գոնե իմացական նախնական մակարդակում գրականագիտական դպրոցների, առանձին ստեղծագործական ուղղությունների մասին գիտելիքների,<br>-կարողանա գրական երկը վերլուծել ըստ ձևային-կառուցվածքային, բովանդակային, սոցիոլոգիական, համադրական, կենսագրական, հոգեբանական, իմաստասիրական, այլևայլ մեթոդների,<br>-գրականագիտական, մասնավորապես՝ քննադատական բնույթի ուսումնասիրություններում, հրապարակումներում, ընդհանրապես, գիտական բնույթի երկերում գտնել ռացիոնալը, տարանջատել կարևորն ու անկարևորը, որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ: | | | |
| **Դասընթացի բովանդակությունը** | *Թեմա 1.* Ներածություն: Հայ գրական քննադատության զարգացման փուլերը: Քննադատությունը 5-րդ դարի մատենագրության մեջ<br>*Թեմա 2.* Քննական հայացքները Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Փարպեցու մատյաններում: Հովհ. Մանդակունու | | | |

| | |
|---|---|
| | քննական հայացքները: Քննական հայացքներ թարգմանական գրականության մեջ... Դիոնիսիոս Թրակացու քրեականության մեկնությունները<br><br>*Թեմա 3.* Գրական քննադատությունը 10-14-րդ դարերում: Գր. Նարեկացի: Գրիգոր Մագիստրոս Պահլավունի: Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: Ներսես Շնորհալի... Հովհաննես Պլուզ Երզնկացի...<br><br>*Թեմա 4.* Գրական քննադատությունը 18-րդ դարում: Մխիթարյաններ: 19-րդ դարի լուսավորական քննադատությունը: Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան: Ժողովրդական և գուսանական արվեստի գնահատության խնդիրը: Թատերական քննադատությունը<br><br>*Թեմա 5.* Քննադատական միտքը 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Ստ. Պալասանյան, Րաֆֆի, Հակոբ Պարոնյան...<br><br>*Թեմա 6.* Գրական քննադատությունը 19-րդ դարավերջին. Ղ. Աղայան, Լ. Մանվելյան...<br><br>*Թեմա 7.* Վրթ. Փափազյան, Ալ. Շիրվանզադե, Հովհ. Թումանյան: «Իրապաշտ» կամ «բնապաշտ» դպրոցի քննադատությունն ու փորձը: Արփ. Արփիարյան, Գր. Զոհրապ<br><br>*Թեմա 8.* Հայ քննադատությունը 20-րդ դարասկզբին: Արտաշես Հարությունյան: Գրական դպրոցները հայ իրականության մեջ: Նիկոլ Աղբալյան, Ս. Հակոբյան, Արսեն Տերտերյան:<br><br>*Թեմա 9.* Թ. Ավդալբեկյան, Հ. Սուրխաթյան, Ղ. Խանզադյան, Պ. Մակինցյան: Մարքսիստական քննադատությունը:<br><br>*Թեմա 10.* Գրական քննադատությունը խորհրդահայ տարիներին |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Բանավոր հարցում, ինքնուրույն աշխատանքի ստուգում:<br><br>Ընթացիկ ստուգում՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>Ստուգարք՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը գումարային 20 միավոր: |
| **Գրականություն** | *Պարտադիր*՝<br>Հրանտ Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Ա, Բ, Գ<br>Հեղինակային կոլեկտիվ (խմբ.՝ Ս. Սարինյան), Հայ քննադատության պատմություն, 2 հատորով<br>Ջրբաշյան Էդ., Գեղագիտություն և գրականություն |

| | |
|---|---|
| | Լ. Ասմարյան, Արևմտահայ քննադատական միտքը 19-րդ դարի 60-70- ական թթ.<br>Ժ. Քալանթարյան, Հայ գրականագիտության պատմություն<br>Ժ. Քալանթարյան, Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր<br>Հեղինակային կոլեկտիվ (կազմեց և ծանոթագրեց՝ Ժ. Քալանթարյան), Հայ գրական քննադատության քրեստոմատիա, հատոր 1,2<br>Լարիսա Մնացականյան, Գրական քննադատությունը 20-րդ դարասկզբին<br>Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը (,Քննադատության առարկան և մեթոդըե բաժինը)<br>Լ. Մնացականյան, Արևմտահայ քննադատության պատմություն<br>Լ. Ասմարյան, Գրական քննադատությունը 70-80-ական թ.թ<br>Ս. Սարինյան, Սերունդներ և ավանդներ<br>Մ. Նալբանդյան, Գրականության մասին<br>Գր. Զոհրապ, Գրականության մասին<br>Արտ. Հարությունյան, Գիշերվան ճամփորդը/ ,Հոդվածներե/<br>Վրթանես Փափազյան, Գրականության մասին<br>Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3*Լրացուցիչ* ՝<br>Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ |